

Ապա անցնելով հայադիտութեան առաջադրած խնդիրներին՝ յօդուածագիրը շօշափում է հայերէնի ծագման եւ պատկանելիութեան հարցը, յիշատակելով մինչայժմեան գիտական տեսութիւնները այդ մասին: Ռոթ համաձայն է մեծագոյն հայագէտ Հիւրշման-ի կողմից վերջնապէս հաստատուած եւ ընդհանուր ընդունելութիւն գտած այն կարծիքին, թէ՛ «հայերէնը մի ինքնուրոյն ճիւղ է հնդեւրոպական լեզուների ընտանիքի մէջ», թէ՛ «այն ամէնը, ինչ որ նրան երևութապէս իրական կերպարանք է տալիս, ոչ այլ ինչ է, եթէ ոչ փոխառութիւն, որ ընդունել է հայ ժողովուրդը իր լեզուի մէջ՝ պատմական զարգացման ընթացքում»:

Նախաքրիստոնէական 7-րդ դարից սկսած Իրանը մեծապէս ազդել է ոչ միայն հայ լեզուի, այլ եւ հայ կենցաղի, մշակոյթի եւ արուեստի վրայ:

Եւ սակայն Հիւրշմանի ուսումնասիրութիւններից յետոյ եւս մնացել են լուսաբանութեան կարօտ խնդիրներ: Հայ ազգի զարգացման պատմութիւնը ինքնին ցոյց է տալիս, որ նա խառնուրդ ժողովուրդ է, որ՝ ուրեմն հայերէնը եւս խառնուրդ լեզու պիտի լինի: Ապա յիշատակելով հայերէնի ազգակցութիւնը փրոնիզացիներին (Հերոդոտ), հայ ցեղի շարժումը արեւմուտքից դէպի արեւելք՝ Փոքր Հայք, քիմմերացիների արշաւանքը 7-րդ դարում Ք. Ա., հայերի առաջխաղացումը աւելի եւս դէպի արեւելք, այն երկիրը, որ յետոյ մեր ցեղի անունով Հայաստան կոչուեց, յետոյ՝ խաղերի պետութեան անկումը մարաց ձեռքով, հայերի բնակութիւն հաստատելը Իրանից նոր հայրենիքի դաշտերում, իսկ բնիկները՝ ալարօտ ցեղի տեղահանութիւնը դէպի Կովկաս կամ երկրի լեռնային շրջանները, հին եւ նոր տարրերի ձուլումը իրար հետ, հեղինակը եզրակացնում է, թէ՛ այդ ամէնին շնորհիւ «տարբեր տարրերից ծագեց հայկական մի նոր ժողովուրդ: Բնականաբար նա որոշակի պիտի արտայայտուէր նաեւ հայերէն լեզուի մէջ»:

Ռոթ այն կարծիքէն է, որ հայկական արդի բարբառների մէջ պահպանուած են տարրեր մեր լեզուի կազմակերպման այդ շրջանից: Որովհետեւ հայոց լեզուն գրականութեան

մէջ յայտնի է բաղդատարար ուշ ժամանակներից, Ե. դարից սկսած միայն, այն եւս՝ արդէն իսկ զարգացած վիճակում. դրա համար էլ իր զարգացման սկզբնական շրջանի հետքերը դժուարաւ տարբարուծելի են:

Գալով մեր դասական լեզուին, Ռոթ այն կարծիքն է յայտնում, թէ՛ ժամանակի խօսակցական լեզուից բոլորովին տարբեր մի դրական լեզու է Ե. դարի մեր գրաբարը, թէ՛՝ այդ գրաբարը նոյն ժամանակներում ապրած է եղել զարգացման բաւական հին անցեալ: Իսկ այն հարցին, թէ՛ մեր դասական լեզուն իր ժամանակի ո՛ր բարբառի վրայ է հիմնուել, Ռոթ յայտնում է այն կարծիքը, թէ՛ դա հաւանօրէն եղած պիտի լինի Գողթնի բարբառը: Թէ՛ ինչ ապացոյցներ ունի նա դրա համար, առաջ չէ բերում, ինչպէս եւ հակառակ փաստերով չէ հերքում այն ընդհանրացած տեսութիւնը, համաձայն որի՝ Ալբարատեան բարբառն է եղած, մեր ոստանիկ լեզուն, հայերէն դասականի հիմքը:

Յոյց տալու համար, թէ՛ հայերէնը իսկապէս որ իր զարգացման ընթացքում կրկնակ ազդիւրներից է սնուել, Ռոթ առաջ է բերում մի քանի նմուշներ հայոց դասական լեզուից, ուր, օրինակ, միեւնոյն բայը երկու տարբեր ձեւով է խոնարհւում, եւ կամ կամ միեւնոյն դոյականը տարբեր ձեւերով է հոլովւում:

Մեր բարբառների ուսումնասիրութիւնը հեղինակը համարում է կարեւոր պահանջ՝ հայ լեզուի պատմական զարգացումը լուսաբանելու համար: Նա յիշատակում է այդ մարզի մէջ կատարուած ուսումնասիրութիւնները, անտես է անում սակայն Պ. Աճառեանի յատկապէս այդ ուղղութեամբ կատարած մի շարք կարեւոր ուսումնասիրութիւնները:

Հայերէն լեզուի ուսումնասիրութեան խնդրից յետոյ Ռոթ անցնում է մեր մատենագիրների քննական հրատարակութեանց, ինչպէս նաեւ հայերէն արձանագրութիւնները մի corpus-ի մէջ հաւաքելու անհրաժեշտութեան խնդրին: Յայտնի է, որ, թէ՛ եւ քիչ, բայց եւ այնպէս մի որոշ աշխատանք կատարուած է մեզնում այդ ուղղութեամբ: Յետոյ Ռոթ շեշտում է հայերէնի եւ կովկասեան լեզուների մէջ եղած յարակցութիւնը պարզա-